Խալաթյան Լ.
Միրիմանյան Ս.
Երևանի պետական համալսարան

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ABSTRACT
METODS OF TESTING STUDENTS' EDUCATIONAL ACTIVITIES

Testing as a method of knowledge control in teaching foreign languages is an integral part of teaching methods. It provides an opportunity not only to test the acquired knowledge of students, but also to use in practice various methods and approaches of training related to the achievement of goals and objectives. The article is devoted to the test control of the quality of knowledge in teaching foreign languages in the modern education system. The method of testing allows not only to consolidate the knowledge and skills, but also to identify gaps in students' material, allows the teacher to adjust the further curriculum in accordance with the results of the tests and pay more attention to poorly understood material. When preparing tests in foreign languages, it is necessary to select such tasks that cover all grammatical, lexical, phonetic aspects, offer students to perform several exercises on the same topic, minimize the chance when students choose any of the answer options. Test tasks activate mental activity, teach students to work independently.

Key words: *testing, teaching methods, skills, teaching process, motivation of learning process.*

РЕЗЮМЕ
МЕТОДЫ ТЕСТИРОВАНИЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА СТУДЕНТОВ

Тестирование как метод контроля знаний при обучении иностранным языкам является неотъемлемой частью методики преподавания. Оно дает возможность не только проверить приобретенные знания студентов, но использовать на практике различные методы и подходы обучения, связанные

с достижением целей и задач. Статья посвящена тестовому контролю качества знаний при обучении иностранным языкам в современной системе образования. Метод тестирования позволяет не только закрепить полученные знания и навыки, но и выявить у обучающихся пробелы в пройденном материале, он также дает возможность преподавателю скорректировать дальнейший учебный план в соответствии с результатами проведенных тестов и уделить большее внимание плохо усвоенному материалу. При составлении тестов по иностранным языкам необходимо подбирать такие задания, которые охватывают все грамматические, лексические, фонетические аспекты, предлагают учащимся выполнить несколько упражнений по одной теме, минимизировать случайность при выборе учащимися любого из вариантов ответов. Тестовые задания активизируют умственную активность, студентов к самостоятельной работе.

Ключевые слова: *тестирование, методы обучения, навыки, процесс преподавания, мотивация процесса обучения.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Օտար լեզուների գիտելիքների ստուգման թեստավորումը դասավանդման անբաժանելի մասն է: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն ստուգել ուսանողների ձեռք բերված գիտելիքները, այլ նաև գործնական կիրառել նպատակների հասնելու հետ կապված վերապատրաստման տարբեր մեթոդներ և մոտեցումներ: Հոդվածը նվիրված է ժամանակակից կրթական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցում գիտելիքների որակի ստուգման վերահսկմանը: Թեստավորման մեթոդը թույլ է տալիս ոչ միայն ամրապնդել գիտելիքները և հմտությունները, այլև բացահայտել ուսանողների բացթողումները, թույլ տալ ուսուցիչներին դասավանդել հետագա ուսումնառությունը թեստերի արդյունքներին և ավելի մեծ ուշադրություն դարձնել վատ հասկանալի նյութի վրա: Օտար լեզուներով թեստեր պատրաստելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք ներառում են բոլոր քերականական, լեզվական, հնչյունային ասպեկտները, ուսանողներին միևնույն թեմայով մի քանի վարժանքներ կատարել, նվազագույնի հասցնել այն հնարավորությունը, երբ ուսանողները ընտրում են ցանկացած պատասխանի տարբերակ: Թեստային առաջադրանքները ակտիվացնում են մտավոր գործունեությունը, սովորեցնում են ուսանողներին աշխատել ինքնուրույն:

Բանալի բառեր՝ *փորձարկում, ուսուցման մեթոդներ, հմտություններ, ուսուցման գործընթաց, ուսուցման գործընթացի շարժառիթ:*

Օտար լեզվի ուսումնական գործընթացի ստուգումը մեր դասավանդման կարևորագույն մասն է: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն ստուգել ուսանողի ձեռք բերած գիտելիքները, այլ նաև պրակտիկայում կիրառել զանազան մեթոդներ և մոտեցումներ՝ կապված ստուգման լայն և նեղ նպատակների հետ: Կրթության նպատակն է անձի զարգացումն ու ուսումնական գործընթացն իրականացնելու ունակ անհատի ձևավորումը:

Ուսանողներին խոսելու կամ գրելու տիրապետելու գործընթացը երկարատև, շարունակական աշխատանք է, և անհրաժեշտ է փոխգործակցություն: Լեզվական նյութը պետք է ներկայացվի աստիճանաբար՝ հիմնվելով նրանց խոսքի և քերականության հմտությունների ունակությունների վրա: Իհարկե, նյութի գիտելիքների մակարդակը և վարպետությունը տարբերվում են, ուստի անհրաժեշտ է անցկացնել պարբերական ստուգումներ դասընթացների ընթացքում ձևավորված որոշակի հմտությունների և ունակությունների տիրապետման մակարդակը որոշելու համար: Ստուգման ձևերն ու մեթոդները կարող են տարբեր լինել, սակայն վերահսկողության հիմնական նպատակն է բացահայտել բոլոր ուսանողների կողմից ուսումնասիրված նյութի ընկալման և հասկացման մակարդակը: Ավելին, ստուգումը պետք է ուղեկցվի հետագա վերլուծության և քննարկման միջոցով, որոշակի լեզվական նյութի յուրացման մեջ ուսանողների դժվարությունների կամ գիտելիքների բացերի բացահայտման և, իհարկե, ուսուցչի ինքնատիրապետման և որոշակի խմբի դասավանդման մեթոդների արդյունավետության ստուգման համար: Դրանք փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով:

Ուսումնական գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ձևավորման և ուսուցման գերխնդրի՝ գիտելիքներն անձի զարգացման միջոց դարձնելու ճանապարհին ուսանողը պետք է անցնի ճանաչողության հետևյալ փուլերը.

1. Գիտելիքի ձեռքբերում,
2. Իմաստավորում (հասկացում-յուրացում),

3. Կիրառում,

4. Նոր գիտելիքների ինքնուրույն ձեռքբերում /ընդհանրացում:

Այս շղթայի 4 օղակից յուրաքանչյուրն էլ կարևոր է: Դրանցից որևէ մեկի բացակայությունը կխոչընդոտի գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերմանը: Այսինքն՝ կրթադաստիարակչական գործընթացի կամ դրա առանձին բաղադրիչների իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն ուսանողների ձեռք բերած գիտելիքների կայունությամբ, ըմբռնման բազմակողմանիությամբ, այլև տարբեր պայմաններում դրանց ճկուն կերպով կիրառմամբ, նոր գիտելիքների ձեռքբերման ունակություններով, դրանց և հների միջև կապեր տեսնելու կարողություններով:

Ճանաչողության ուղու այս բաղադրամասերի իրականացման համար ուսումնական գործունեությունը պետք է ծառայի իր նպատակին. ոչ միայն ուսանողի գործունեությունը պիտի գնահատվի վերջնարդյունքում, այլև այն պիտի վերահսկվի ընթացքում: Առավել կարևորն այն է, որ արդյունքները պետք է վերլուծվեն:

Գնահատականը (նաև գնահատումն ընդհանրապես ունի բազմաթիվ գործառույթներ՝ գնահատող, ամփոփող, վերահսկող, ինքնավերահսկվող, խրախուսող-պարսավող, խթանող և այլն): Գործունեության արդյունքները հարկավոր է վերլուծել ըստ այդ գործառույթների: Գիտելիքների, ունակությունների և հմտությունների պարբերաբար հաշվառումը նպաստում է դրանց ընկալման և գիտակցման, իմաստավորման և մտապահման նպատակով սովորողների ծավալած գործողությունների ժամանակ ծագած խնդիրների բացահայտմանը, ինչպես նաև այդ գործողությունների և դրանց կառավարման եղանակների շտկմանը:

Անշուշտ, ուսանողների ուսումնական գործունեության ստուգումը պրակտիկայում իրականացվում է զանազան ձևերով, մեթոդներով՝ կապված ստուգման նպատակների հետ: Յուրաքանչյուր ուսումնական հիմնարկություն ստուգում է և կառավարվում տվյալ հաստատության համար ընդունելի մեթոդներով: Սակայն անկախ այդ զանազանությունից՝ ստուգման բոլոր համակարգերում էլ պահպանվում են նպատա-

կայնությունը, պարբերականությունը և օբյեկտիվությունը: Այս սկզբունքների հաշվառման դեպքում ապահովվում են՝

- գիտելիքների ստացման գործընթացի բազմակողմանիությունը,
- դրա բոլոր բաղադրիչների յուրացման մակարդակի որոշումը,
- ձևավորված ունակությունների և հմտությունների ստուգումը,
- ստուգման օպերատիվությունն ու արդիականությունը:

Ուսումնական գործունեության դաս-լսարանային համակարգում գոյություն ունեն ուսանողի աշխատանքի գնահատման և ստուգման ինչպես ձևավորված, գիտականորեն մշակված, այնպես էլ տարերային, պրակտիկայի վրա հիմնված ստուգման զանազան տեսակներ: Դրանց վերլուծության և ընդհանրացման արդյունքում Ն. Կարպովան (Интеллектуальная Система Тематического Исследования. 1998. Москва) մասնավորապես առանձնացնում է հետևյալ տեսակները.

Ստուգման տեսակները



Ստուգման տեսակների իրականացման համար ընտրվող մեթոդներն ունեն երկու նպատակադրում.

ա) տեսական գիտելիքների ստուգում, որի ժամանակ օգտագործվող մեթոդներն են՝

- բանավոր հարցում,
- գրավոր հարցում,

բ) գործնական ունակությունների և հմտությունների ձևավորման գործընթացի ստուգում՝ խոսքային դրսևորմամբ:

Ստուգման ձևերի ընտրությունը պետք է կատարի դասախոսը, ով որոշում է, թե որ եղանակն է նպատակահարմար տվյալ խմբի, թեմայի և

իր համար կարևոր խնդիրների լուծման գործում: Այդ ձևերը կարող են համակարգվել և ընտրվել՝ հաշվի առնելով ուսանողների քանակը, տեղը, գնահատման ձևը և այլն: Ըստ էության, բոլոր ձևերն էլ անհրաժեշտ և արդյունավետ են: Կարևորը դրանց ճիշտ և նպատակային ընտրությունն է:

Ստուգման ձևերն ըստ նպատակների՝

ա) Ըստ ներկայացման եղանակի՝
- գրավոր
- բանավոր

բ) Ըստ ստուգվողների քանակի՝
- անհատական
- ընդհանրական

գ) Ըստ գնահատականի տարբերակման՝
- առանց բալային գնահատականի
- չտարբերակված (ստուգարք)
- տարբերակված (քննություն)

դ) Ըստ ստուգվող նյութի ծավալի՝
- ընթացիկ (պարբերական)
- ժամանակահատվածային (ստուգարք)
- ամփոփիչ (քննություն)

ե) Ըստ ուսուցման նպատակի՝
- ուսուցողական
- բացատրամեթոդական:

Այժմ ներկայացնենք ուսանողների գիտելիքների, ունակությունների և հմտությունների ստուգման մեթոդները: Իհարկե, կան թեստերի ու հարցերի շատ տարբերակներ, բայց մենք ընտրել ենք մեր կողմից հաճախ օգտագործվող մի քանի վարժությունների տեսակներ:

1. Բազմակի ընտրություն (Multiple choice)

Ընտրեք ճիշտ բառը նախադասությունը լրացնելու համար:

Choose the correct word to complete the sentence.

Cook is _____today for being one of Britain's most famous explorers.

a) recommended b) reminded c) recognised d) remembered

Այս տեսակի վարժության մեջ կան մի քանի տարբերակներ, որոնցից ուսանողը պետք է ընտրի մեկը: Այս դեպքում առավելությունն այն է, որ պատասխանները հեշտ է նշել, և աշխատանքը շատ ժամանակատար չէ:

Բազմակի ընտրության վարժությունները կարելի է օգտագործել ստուգելու համար քերականությունը, բառապաշարը, ընթերցանությունը: Սակայն պետք է նշել, որ ուսանողները պարզապես կարող են գուշակել պատասխանները՝ առանց իմանալու ճիշտ տարբերակը:

2. Բաց թողնվածի լրացում (Gap-filling)

The food in the restaurant was terrible so we decided to l…… .

When I try to w……. I put my lips together but I can't do it!

Everyone nowadays knows the benefits of ..... exercise.

Ուսանողը լրացնում է նախադասության բաց թողնված մասը: Երբեմն կարելի է ընդգրկել հուշող մի ակնարկ, օրինակ՝ բառի առաջին տառը և այլն: Այս տիպի վարժությունները սովորաբար ստուգում են քերականությունը կամ բառապաշարը: Այստեղ կրկին թերությունն առանց մտածելու տարբերակ նշելն է: Դասախոսը պետք է դա հաշվի առնի, թեև որոշ դեպքերում կարող են լինել շատ ճիշտ պատասխաններ:

Gap-fill-ն կարող է կիրառվել բառապաշարի, քերականության ստուգման համար: Այն նաև շատ արդյունավետ է լսումների ժամանակ:

3.Համապատասխանեցում (Matching)

Match the word on the left to the word with the opposite meaning.

Գտնել նշված բառաշարքերում հականիշային զույգերը (Գտնել ձախ կողմում գրված բառին հակառակ իմաստով համապատասխան բառը):

fat	old
young	tall
dangerous	thin
short	safe

4.Հոմանիշներ և հականիշներ *(Synonyms and antonyms)*
Arrange the following words in the pairs of synonyms:

alleviate	disseminate
charity	piousness
inherent	indolent
linked with	declare
denomination	function
increase /n/	progress
piety	philanthropy
circulate	mitigate
activity	sect
idle	specific
usher in	bound with
leap	growth

Students are given a list of words, and they are required to give the words that have similar meanings (synonyms) or contrastive meanings (antonyms) with the words given.

Ուսանողներին տրվում են բառեր և պահանջվում է գտնել համապատասխան հոմանիշները և հականիշները:

Այս կարգի բառային վարժությունները երբեմն բավականին դժվար են ուսանողների համար, բայց հնարավորություն են տալիս ընդլայնել բառապաշարը՝ մտապահելով բառերի զույգեր և ոչ թե առանձին բառեր:

5. Հարցերի պատասխանում (Answer the questions)

1. What is social work?
2. What way does social work operate?
3. What does social work collaborate with?
4. What is the main task of social work?
5. What are the main values and principles of social work?

Կարելի է կազմել մի շարք հարցեր անցած մասնագիտական նյութերի, տեքստերի հիման վրա և ստուգել, թե ինչքանով է յուրացված տվյալ թեման: Հարցերը կարող են լինել ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր: Այս տիպի ստուգումները ավելի բարդ են և աշխատատար, քանի որ ակնկալվում է կոնկրետ նյութի իմացություն:

Ստուգումը կարելի է կազմակերպել նաև բանավոր՝ օգտագործելով փոխներգործական մեթոդներ: Ուսանողը պետք է կատարի հետևյալ քայլերը՝

1. կարդա անծանոթ տեքստը և վերարտադրի այն իր սեփական բառերով կամ կիրառելով հեղինակի բառերը: Այս ձևով ստուգվում է նրա բանավոր խոսքի ունակությունը և նոր բառերի օգտագործման կարողությունը: Տրվում է ժամանակ՝ 3-5 րոպե,

2. վերլուծի և արտահայտի իր տեսակետը թեմայի վերաբերյալ. Ի՞նչով է հետաքրքիր այս տեքստը, դուր եկա՞վ, թե՞ ոչ: Տրվում է ժամանակ՝ 5-7 րոպե,

3. շարունակի միտքը: Տրված տեքստին ավելացնի որոշ նախադասություններ՝ առաջարկելով նոր լուծումներ: Ժամանակ՝ 5 րոպե:

Առաջարկված վարժությունները դասավանդողներին կօգնեն ոչ միայն բացահայտել ձեռքբերումները, այլև որոշել այն թույլ կողմերը, որոնք նկատվում են ուսանողների գիտելիքների, ունակությունների և

հմտությունների դրսևորումներում: Մենք հոդվածում չանդրադարձանք գիտելիքների ստուգման ժամանակ ուսանողների ձեռքբերումների գնահատմանը: Մեր նպատակը բալային գնահատականը չէ: Այսպիսի ստուգման միջոցով կարելի է բարձր մակարդակով ու ճշգրիտ կերպով ստուգել ուսանողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները և հետագա ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակ վերլուծել դրանք:

Գնահատելը և գնահատականը դասախոս-ուսանող փոխգործակցության ու փոխազդեցության վերջին, ավարտական փուլն է, որը եթե իրականացվում է առանց ստուգման նշված չորս տեսակների, ապա հաճախ դառնում է սուբյեկտիվ: Կան խնդիրներ և դժգոհություններ ընթացիկ քննությունների գնահատման հետ կապված: Կարծիք է հայտնվում, որ սխալ գնահատումն աղավաղում է քննության և ստուգման էությունը, մենք ուսանողին ավելի շատ կենտրոնացնում ենք հենց գնահատականի վրա, ինչը նույնպես բացասական է ազդում ընդհանուր գիտելիքների միջավայրի ձևավորման վրա: Ակամա համակարգը ինքն է խրախուսում առանց այն էլ ուսանողների մոտ ձևավորված գնահատականի կարծրատիպը: «Գնահատականը գիտելիքի թիվ մեկ թշնամին է». այսպիսի պնդում հաճախ կարելի է լսել դասախոսների և ուսանողների հետ հարցումների ժամանակ: Այստեղ տեղին է նշել, որ գնահատականի հանդեպ հիմնական խնդիրը սուբյեկտիվության և արդարության հետ է կապված: Դասախոսները ժամանակի ընթացքում լսարանի հետ կապվածություն են ձեռք բերում, որը ուղղակի կամ անուղղակի ազդում է քննական գործընթացի վրա: Հաճախ քննական գործընթացը սթրեսային է ոչ միայն ուսանողների, այլ նաև դասախոսների համար:

Այսպիսով՝ ուսումնական գործընթացում առաջնային է դասընթացին սովորողների մասնակցությունը, նրանց անցած ճանապարհը, այդ ընթացքում ծավալված գործունեությունը և արդյունքում ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները, դրանց ամբողջականությունն ու մտավոր կարողությունների զարգացումը: Անշուշտ, սրանք գնահատ-

ման ենթակա որակներ չեն: Աշխատանքի արդյունքի լավագույն գրավականը դասախոս-ուսանող ճիշտ հարաբերությունների ձևավորումն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Philida Schellekens** (2011), Teaching and Testing the Language Skills of First and Second Language Speakers, Produced for Cambridge ESOL.
2. **Chen Desheng, Ashitha Varghese** (2007), Testing and Evaluation of Language Skills, Bharathiar University, Coimbatore.
3. **Rossi, P.H. Lipsey, M.W., & Freeman, H.E.** (2004), Evaluation: A systematic approach (7th ed.)
4. **Н.В. Карпова** (1998), Интеллектуальная Система Тематического Исследования. Москва.

Խալաթյան Լ. – դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն
e-mail: li.khalatyan@ysu.am
Միրիմանյան Ս. - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն
e-mail: susanamirimanyan@inbox.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 10.04.19, տրվել է գրախոսության՝ 16.04.19-23.04.19, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 03.05.19